ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«07» փետրվարի 2019թ. N 28-Ա

«ԱՆՏԱՌԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 28-ի N 1152-Ն որոշման 3-րդ կետի «գ» ենթակետը, կառավարության 2019թ. հունվարի 17-ի N 10-Ն որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետը, վարչապետի 2018թ. հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) «Անտառային մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն N 1 հավելվածի (նոր խմբագրությամբ).

2) «Անտառային մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:

ՆԱԽԱՐԱՐ Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«07» փետրվարի 2019թ.
Ք. Երևան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
2019 թվականի փետրվարի "07"-ի N 28-Լ հրամանի

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 6 ՕՐԻՆԱԿ
ՕՐԻՆԱԿ 6

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝
ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ
13.01.2006թ.
ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 273.210.04175
Հարկ վճարողի հաշվառման համար 01555644
13.01.2006թ. գրանցված կանոնադրություն
Թիվ _____ փոփոխություն

Գրանցված է
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆԿՈՂՄԻՑ

-------- --------- 2019թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<ԱՆՏԱՌԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ>>
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
(նոր խմբագրություն)

Հաստատված է՝
Բնապահպանության նախարարի
«07» փետրվարի 2019թ. N28-Լ հրամանով

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՆՏԱՌԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Անտառային մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է, որը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ օրենքների ու նորմատիվ իրավական ակտերի հիման վրա, ինչպես նաև սույն կանոնադրությամբ:
2. Կազմակերպությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 28-ի «Անտառների մոնիթորինգի համակարգի ներդրման մասին» N 1152-Ն որոշման համաձայն:
3. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ հիմնադիր):
4. Կազմակերպության կանոնադրությունը դրա հիմնադիր փաստաթուղթն է:
5. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանմամբ կլոր կնիք, դրոշմակնիք, կարող է ունենալ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:
6. Կազմակերպության անվանումն է՝
1) հայերեն լրիվ «Անտառային մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
2) հայերեն կրճատ՝ «ԱՄԿ» ՊՈԱԿ,
3) ռուսերեն լրիվ՝ Государственная некоммерческая организация «Центр лесного мониторинга»,
4) ռուսերեն կրճատ՝ ГНО «ЦЛМ» ,
5) անգլերեն լրիվ՝ «Forest Monitoring Center» State Non-Commercial Organization

6) անգլերեն կրճատ՝ «FMC» SNCO
7. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մամիկոնյանց 39ա.

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

8. «Անտառային մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության հիմնական առարկան և նպատակներն են՝
1) ապօրինի հատումների, բնափայտի տեղափոխման, իրացման և այլ բացասական գործողությունների կանխարգելման նպատակով ուսումնասիրությունների իրականացումը,
2) անտառային մոնիթորինգի իրականացումը:
9. «Անտառային մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության խնդիրներն են՝
1) մասնակցում է անտառների և անտառային հողերի վիճակի և դրա բացասական ներգործության ու հետևանքների մոնիթորինգի կազմակերպման, պետական քաղաքականության և ռազմավարության. դրանց կենսագործման պետական ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին.
2) իրականացնում է անտառների և անտառային հողերի վրա տարբեր տեսակի ներգործությունների ու դրանց հետևանքների, ինչպես նաև ապօրինի հատումների, բնափայտի տեղափոխման, իրացման և այլ բացասական գործողությունների կանխարգելման նպատակով դիտարկումներ, գնահատումներ և կանխատեսումներ:
10. Իր առջև դրված խնդիրների կատարումն ապահովելու նպատակով կազմակերպությունն օրենքով սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝
1) ապահովում է անտառների և անտառային հողերի վրա ներգործության ու դրա հետևանքների, ապօրինի հատումների, բնափայտի տեղափոխման, իրացման և այլ բացասական գործողությունների կանխարգելման նպատակով դիտարկումների, տվյալների հավաքագրման, պահպանման, մշակման, վերլուծության և տարածման մեթոդների, տեխնիկական միջոցների ու համակարգերի անխափան աշխատանքն ու կատարելագործումը, ստացված տեղեկատվության հավաստիության անհրաժեշտ մակարդակը, ձեռնարկում է միջոցներ այդ աշխատանքները միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ ներդնելու, մոնիտորինգի գիտացանցը և նյութատեխնիկական բազան զարգացնելու ուղղությամբ.
2) ապահովում է Հայաստանի Հանրապետության տարածքում ապօրինի հատումների, ապօրինի հատումների արդյունքում բնափայտի տեղափոխման, իրացման և այլ բացասական գործողությունների կանխման, ինչպես նաև այդ

երևույթների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով ապօրինի հատումների դեմ պայքարի աշխատանքների թափանցիկությունը.

3) մշակում, կազմում և տարածում է անտառների վրա ներգործությունների վերաբերյալ կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումներ՝ տեղեկագրերի, բուկլետների և տեղեկատվական այլ միջոցների տեսքով.

4) Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնում է անտառների և անտառային հողերի վրա ներգործության, դրա հետևանքների և ապօրինի հատումների, բնափայտի տեղափոխման, իրացման և այլ բացասական գործողությունների վերաբերյալ տվյալների հավաքագրումը, կենտրոնացված հաշվառումը, մշակումը և տրամադրումը իրավասուպետական մարմիններին,

5) մասնակցում է ապօրինի հատումների և անտառանյութի՝ անտառից դուրսբերման մոնիթորինգի չափորոշիչների մշակման աշխատանքներին,

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցում է անտառների և անտառային հողերի վրա ներգործության մոնիտորինգի միջազգային ու տարածաշրջանային համատեղ ծրագրերի իրականացման, տեղեկատվության փոխանակման գլոբալ և տարածաշրջանային միասնական համակարգերի ձևավորման և զարգացման աշխատանքներին:

11. Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակը.

1) Աշխարհատեղեկատվական համակարգի և հեռազննման տեխնոլոգիաներով հետազոտությունների իրականացում:

12. Պետական կազմակերպությունը լիցենզավորման ենթակա գործունեություն կարող է իրականացնել լիցենզիայի առկայության դեպքում:

III ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

13. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական կառավարման մարմինը և գործադիր մարմինը՝ տնօրենը:

14. Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

15. Հիմնադրի բացառիկ լիազորությունները սահմանվում են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

16. Կազմակերպության ընդհանուր կառավարումը իրականացնում է Բնապահպանության նախարարությունը, որպես ոլորտի կառավարման պետական լիազորված մարմին:

17. Պետական լիազորված մարմնի լիազորություններն են՝

1) կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,

2) կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,

3) կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և/կամ ամրագրված պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը.

4) կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

5) կազմակերպության աշխատանքային ծրագրերի հաստատումը և գործունեության վերահսկողությունը,

6) կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանների, հրահանգների, կարգադրությունների ու ցուցումների կասեցումը կամ դրանք ուժը կորցրած ճանաչումը,

7) կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունների լսումը և դրա գործունեության վերստուգման արդյունքների քննարկումը,

8) կազմակերպությանն ամրագրված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողության իրականացումը,

9) կազմակերպության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի հաստատումը.

10) կազմակերպության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

11) կազմակերպության եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատումը,

12) «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթների իրականացումը:

18. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնի է նշանակում և ազատում լիազորված պետական մարմինը:

19. Կազմակերպության տնօրենն օրենքով, հիմնադրի և լիազորված մարմնի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է

պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

20. Կազմակերպության տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը: Պայմանագրում սահմանվում են նրա իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի, պետական կառավարման այլ մարմինների հետ, նրա աշխատանքի վարձատրության պայմանները, պայմանագրի դադարեցման օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերը կգտնեն անհրաժեշտ: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին:

21. Տնօրենի պաշտոնում նշանակված անձը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

22. Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և/կամ պետությանը պատճառած վնասի համար: Տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

23. Տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի, լիազորված պետական մարմնի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

24. Տնօրենն իրականացնում է օրենսդրությամբ սահմանված և պայմանագրով իրեն տրված այլ լիազորություններ:

25. Տնօրենի բացակայության դեպքում, լիազորված պետական մարմնի գրավոր որոշման համաձայն այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ:

26. Տնօրենի տեղակալները պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում են տնօրենի կողմից՝ լիազորված պետական մարմնի համաձայնությամբ:

27. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ,

2) օրենսդրությամբ հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,
3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
4) սահմանում և հաստատում է կազմակերպության աշխատողների հաստիքացուցակը՝ համաձայնեցնելով լիազորված պետական մարմնի հետ, պայմանագրային հիմունքներով ընդունում աշխատողներ,
5) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում է կարգապահական տույժեր,
6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,
7) սահմանում է կազմակերպության կառուցվածքը,
8) օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
9) ապահովում է կազմակերպության գործունեության վերաբերյալ համապատասխան հաշվետվությունների կազմումը և սահմանված կարգով ներկայացնում լիազորված պետական մարմնին,
10) իրականացնում է օրենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:
28. Կազմակերպությունն՝
1) ինքնուրույն է կազմակերպում իր գործունեությունը, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքում պայմանագրեր և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում որոշում է սպառողների պատվերներով և նրանց ֆինանսավորմամբ իր կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության սակագները,
2) հաշվապահական հաշվառումը վարում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հաշվապահական ստանդարտներով և այլ իրավական ակտերով, սահմանված կարգով ներկայացնում է ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններ, հարկերը վճարում է ոչ առևտրային կազմակերպությունների համար օրենքով սահմանված կարգով ու դրույքաչափերով,
3) կրում է օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

29. Ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ կազմակերպության աշխատակիցների առողջությանը և գույքին պատճառված վնասի հատուցումը կատարվում է օրենքով սահմանված կարգով:

IV ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

30. Կազմակերպությունն անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով տիրապետում է իրեն հատկացված և ամրագրված գույքը:

31. Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեյի կողմից իրականացվող ֆինանսավորումից, միջազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող աշխատանքների (ծրագրերի) միջոցներից, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության մատուցման դիմաց վճարումներից, հովանավորչական, նվիրատվական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ մուտքերից:

32. Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթը օգտագործվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

33. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության արժույթով կամ արտարժույթով:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

34. Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը, հիմնադրի կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմինները:

35. Կազմակերպությունը հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

36.Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել հիմնադրի որոշմամբ և/կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Կազմակերպության լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Հավելված N2
Բնապահպանության նախարարի
"07" դեկտեմբերի 2019թ. N 28-Լ հրամանի

<<Անտառային մոնիթորինգի կենտրոն>> ՊՈԱԿ-ին սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմ

Հերթական համարը	Օբյեկտի անվանումը, համառոտ բնութագիրը	Թողարկման (կառուցման) տարեթիվը	Համարը	Փաստացի առկայությունը		Հաշվ. Հաշվառման տվյալներով	
			գույքային	քանակը	արժեքը (դրամ)	քանակը	արժեքը (դրամ)
1	2	3	4	7	8	9	10
	Կառուցվածքներ						
1	Հեռախոսային ցանց			1	70000	1	70000
	Ընդամենը				**70000**		**70000**
	Մեքենաներ և սարքավորումներ						
1	Տպիչ Canon L13P L3000	30.01.2009թ		3	180000	3	180000
2	ԱՏՍ Մեգա Բելլա ՄԲՊ308	26.12.2009թ		1	216000	1	216000
3	Հեռախոս Panasonic ԿԽ ՏԳ2120	26.12.2009թ		2	56000	2	56000
4	Հեռադիտակ	29.11.2010թ		4	68000	4	68000
5	Պլոտեր	13.12.2010թ		1	2085249	1	2085249
6	Համակարգչային ծրագիր	13.12.2010թ		1	3711918	1	3711918
7	Սելեկտոր	15.07.2011թ		1	30000	1	30000
8	Սելեկտորի կոճակ 12 վատ	15.07.2011թ		1	5000	1	5000
9	Լսափող	15.07.2011թ		8	60000	8	60000
10	Համակարգչային սերվեր	23.05.2011թ		1	1794000	1	1794000
11	Microsoft Windows Serverr	23.05.2011թ		1	603000	1	603000
12	Kaspersky Business Space	23.05.2011թ		1	480000	1	480000
13	Office Std 2010	23.05.2011թ		1	165000	1	165000
14	Computer Desktop	23.05.2011թ		2	625800	2	625800
15	WinPro 7	23.05.2011թ		2	138000	2	138000
16	Office Home and Business 10	23.05.2011թ		2	150000	2	150000
17	Kaspersky 2011	23.05.2011թ		2	25800	2	25800
18	Laptop Computers	23.05.2011թ		3	1473300	3	1473300
19	Office Home and Business	23.05.2011թ		3	225000	3	225000
20	Kasperski 2011	23.05.2011թ		3	38700	3	38700
21	UPS for Server	23.05.2011թ		1	99000	1	99000
22	UPS for Desktop Comp.	23.05.2011թ		2	54000	2	54000
23	Networking	23.05.2011թ		1	708000	1	708000
24	Interbet Connection	23.05.2011թ		1	165000	1	165000
25	Printer(Canon MF 4410)	21.05.2012թ		1	92000	1	92000
26	Սերվեր HP ML 310E 1 հատը	21.05.2013թ		2	2648000	2	2648000
27	APC UPS Smart 1000V 670wates	26.02.2013թ		1	228000	1	228000
28	APS Smart UPS 1000VA USB Serial	01.03.2013թ		2	456000	2	456000
29	APS Smart UPS 1000VA USB Serial	01.03.2013թ		1	228000	1	228000
30	Սերվեր HP ML 350 PG8	07.03.2013թ		1	4344000	1	4344000
31	Սերվեր HP ML310	07.03.2013թ		1	2500000	1	2500000
32	Ցանցային պղնձյա մալուխ առանց	07.03.2013թ		1	4410	1	4410
33	Ցանցային պղնձյա մալուխ	07.03.2013թ		170	24990	170	24990
34	Սվիչ TP-LINK TL_SF10080	07.03.2013թ		2	31400	2	31400

Հերթական համարը	Օբյեկտի անվանումը, համառոտ բնութագիրը	Թողարկման (կառուցման) տարեթիվը	Համարը	Փաստացի առկայությունը		Հաշվ. Հաշվառման տվյալներով	
			գույքային	քանակը	արժեքը (դրամ)	քանակը	արժեքը (դրամ)
1	2	3	4	7	8	9	10
35	HP Swich 48648 port	07.03.2013թ		1	320000	1	320000
36	24HPOW սնուցման աղբյուր	04.11.2013թ		1	17000	1	17000
37	CA 150 իրան	04.11.2013թ		1	9000	1	9000
38	RB450G ուղղորդիչ սարք	04.11.2013թ		1	53000	1	53000
39	Trimble Juno 3B մինի շարժ.համ+տր.միջ.սն/ս.+տեղ.պ	12.12.2013թ		4	1871514	4	1871514
40	ArcPad ծրագրի արտոնագիր	12.12.2013թ		4	1253547	4	1253547
41	RB2011LS-IN ուղղորդիչ	02.07.2014թ		1	56000	1	56000
42	Համակարգիչ Intel Core i5	16.12.2014թ		1	234000	1	234000
43	Մոնիտոր Phillips 21.5	16..12.2014թ		1	54000	1	54000
44	Անխափան սն.սարք	16..12.2014թ		1	17000	1	17000
45	Տպիչ HP LaserJet P 1102W	16..12.2014թ		1	53000	1	53000
46	Ծրագրի արտոնգիր	16..12.2014թ		1	41000	1	41000
47	Ծրագրի արտոնգիր	16..12.2014թ		1	39500	1	39500
48	Էլեկտրական կլինոմետր Haglof	21.04.2015թ.		2	250774	2	250774
49	Չափիչ երկմատ 50սմ, Silvanus	21.04.2015թ.		2	57684	2	57684
50	Չափիչ երկմատ 80սմ, Silvanus	21.04.2015թ.		2	74888	2	74888
51	Տրամագծի չափման	21.04.2015թ.		2	17508	2	17508
52	Չափիչ ժապավեն անտառագետների համար 20մ,	21.04.2015թ.		2	14300	2	14300
53	Ռելասկոպ, կլոր շրջանակ 3 ֆակտորներով	21.04.2015թ.		2	16880	2	16880
54	Տարիքի չափման հորատ, 400մմ/16"5.15/0.200"	21.04.2015թ.		2	113060	2	113060
55	Կեղևի հաստության չափիչ 0-50մմ,	21.04.2015թ.		2	40733	2	40733
56	Կողմնացույց, 360^ նպատակային	21.04.2015թ.		2	42787	2	42787
57	Կրիչ գոտի Hagof 17-103-1001	21.04.2015թ.		2	110561	2	110561
58	E/Port-Replicator	07.06.2016թ.		1	53334	1	53334
59	Նոութբուք HP Compaq CQ60-422DX	07.06.2016թ.		1	295000	1	295000
60	Հեռահաղորդակցման ձեռքի ռնդունիչ Cobra CXT545	23.06.2016թ.		3	192000	3	192000
61	Թվային ֆոտոխցիկ Canon Powershot D30	18.10.2016թ.		3	566100	3	566100
62	Դրոն-eBee ,HS8525,8090	13.02.2017		1	8638137	1	8638137
63	Տեսախցիկ Seqouia with Eb Integration kit, HS code 8525.8010	13.02.2017		1	2218601	1	2218601
64	Ծրագիր Pix4DmapperPpro(single device) one time chari	13.02.2017		1	2587408	1	2587408
65	Նոութբուք MSI GL62	04,09,17		1	795000	1	795000
66	Ոչ նյութական ակտիվ Win home 10	04,09,17		1	65000	1	65000
67	Կոշտ մագնիսական սկավառակ	04,09,17		1	51300	1	51300
68	Համակարգիչ Dell Vostro460i5 (Գնված 25,11,17)	04,09,17		1	385400	1	385400
69	Արտաքին սկավառակ SSD Kingston (Ներառված է համակարգչի մեջ)	04,09,17		1	53800	1	53800
70	Մոնիտոր HPL 1908W (20.03.09)	04,09,17		1	100065	1	100065

Հերթական համարը	Օբյեկտի անվանումը, համառոտ բնութագիրը	Թողարկման (կառուցման) տարեթիվը	Համարը	Փաստացի առկայությունը		Հաշվ. Հաշվառման տվյալներով	
			գույքային	քանակը	արժեքը (դրամ)	քանակը	արժեքը (դրամ)
1	2	3	4	7	8	9	10
	Ընդամենը				**44472448**	**251**	**44472448**
	Տրանսպորտային միջոցներ						
1	Ավտոմեքենա ՎԱԶ21213	2001թ		1	227700	1	227700
2	Մեքենայի մագնիտոֆոն Sony			1	20240	1	20240
3	Մագնիտոֆոնի կալոնկա			2	5060	2	5060
4	Ավտոմեքենա ՎԱԶ21214	02.11.2012թ		2	10930000	2	10930000
5	Անվադող	21.12.2012թ		8	480000	8	480000
6	Անվահեծ R16,պիպկա R268	21.12.2012թ		8	110000	8	110000
	Ընդամենը				**11773000**		**11773000**
	Տնտեսական գույք						
1	Երկաթյա պահարան	12.01.2006թ		2	60000	2	60000
2	Երկաթյա պահարան	12.01.2006թ		1	40000	1	40000
3	Կուլեր G3	28.03.2006թ		1	76000	1	76000
4	Ղեկավարի սեղան	21.02.2008թ		1	320000	1	320000
5	Աթոռ	21.02.2008թ		1	120000	1	120000
6	Սեղան հասարակ	31.01.2007թ		15	438000	15	438000
7	Տակդիր	31.01.2007թ		1	37000	1	37000
8	Լրագրասեղան	31.01.2007թ		1	30000	1	30000
9	Գրասեղան	02.02.2010թ		4	229000	4	229000
10	Գրապահարան	02.02.2010թ		4	198800	4	198800
11	Աթոռ	02.02.2010թ		2	39400	2	39400
12	Բազկաթոռ	02.02.2010թ		4	120000	4	120000
13	Օֆիսի աթոռ	02.02.2010թ		1	102800	1	102800
14	Աթոռ	02.02.2010թ		17	255000	17	255000
15	Տնօրենի սեղան	19.07.2011թ		1	130000	1	130000
16	Հեռուստացույցի տակդիր	19.07.2011թ		1	40000	1	40000
17	Գրապահարան	21.05.2012թ		3	250000	3	250000
	Ընդամենը				**2486000**	**60**	**2486000**
	Ոչ նյութական						
1	Արբանյակային պատկերներ	01.10.2011թ		1	10833633		10833633
2	Արբանյակային պատկերներ	06.09.2012թ		1	2942377		2942377
3	Արբանյակային պատկերներ	08.01.2013թ		1	1218514		1218514
4	Համակարգչային ծրագիր	07.05.2013թ		1	850000		850000
5	Արբանյակային պատկերներ	07.05.2013թ		1	5514802		5514802
6	Արբանյակային պատկերներ	04.12.2013թ		1	9407182		9407182
	Ընդամենը				**30766508**		**30766508**

Հերթական համարը	Օբյեկտի անվանումը, համառոտ բնութագիրը	Թողարկման (կառուցման) տարեթիվը	Համարը	Փաստացի առկայությունը		Հաշվ. Հաշվառման տվյալներով	
			գույքային	քանակը	արժեքը (դրամ)	քանակը	արժեքը (դրամ)
1	2	3	4	7	8	9	10
	ԸՆԴԱՄԵՆԸ						89567956